դ) Ժամանակային ընդգրկումների ձևերը

Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» աշխատությունը բովանդակավորում է պատմական կոնկրետ ժամանակ՝ մեծ ու փոքր իրադարձությունների հոսքով՝ հիմնականում 1602–1662 թվականների ընդգրկումով: Սակայն, եթե տեքստը թեկուզև փոքր չափերով հավակնում է ***գրական*** տարազումին, ապա նրանում ընդգրկված ցանկացած ժամանակային չափում սկսում է ենթարկվել տեքստի օրենքներին՝ վերաիմաստավորելով այդ հասկացությունը: Երևույթը հատկական է նաև միջնադարյան գրական տեքստերի պարագային: «Հայ միջնադարյան պատմագիրների գործերում,– գրում է Զավեն Ավետիսյանը,– ժամանակը ընկալվում է երկու չափումով՝ բնական և պատմական: Պատմական ռեալ ժամանակը նրանք գրանցում են իրադարձության կոնկրետ տարեթիվը և ամիսը նշելով: Դեպքերի «առօրեական» ընթացքը նկարագրելիս պարտադիր կերպով նշում են տարվա եղանակը՝ գարուն էր, աշուն էր, ձմեռ էր և այլն: Իսկ երբ պատմիչների համար չի ճշտվում անցյալում տեղի ունեցած իրադարձության ստույգ թվականը, օգտագործում է «անհիշելի ժամանակներից» ձևը»[26]:

---

[26] ***Զավեն Ավետիսյան,*** Հայ պատմավեպի պոետիկան, Երևան, 1986, էջ 47–48: